ՀԱՆՐԱՀԱՇԻՎ 7

ՈՒՍՈՒՑՉԻ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ

N19. (Նախագծային, հետազոտական, խմբային, ՏՀՏ): *«Հանրահաշվի լեզվի և հայոց լեզվի ընդհանրությունները և տարբերություններ»:*

Ցուցումներ

1. Կազմակերպչական-նախապատրաստական փուլ:

1) Ուսուցիչը հանրահաշվի ուսուցման սկզբում այն դիտարկում է որպես լեզու և առաջարկում հանրահաշիվը և ռուսերենը կամ անգլերենը համեմատել հայերենի հետ: Արդեն այդ նախնական համեմատության փուլում երևան են գալիս անգլերեն-հայերեն կամ ռուսերեն-հայերեն և հանրահաշիվ-հայերեն լեզվական զուգահեռների քերականական կառուցվածքների զգալի տարբերություններ: Այստեղ կարող են առաջանալ տարբեր գաղափարներ: Օրինակ, «Հայերեն, անգլեեն, հանրահաշիվ՝ լեզվական ընդհանրություններ և տարբերություններ», «Բնական լեզուները և հանրահաշվի լեզուն՝ ընդհանրություններ և տարբերություններ», «Հանրահաշվի լեզվի և հայոց լեզվի ընդհանրությունները և տարբերությունները»: աշակերտները ուսուցչի ցուցումով կամ ինքնուրույն կարող են ընտրել դրանցից որևէ մեկը, օրինակ՝ վերջինը որպես նախագծի թեմա:
2) Թեմայի վերնագրից արդեն պարզ են դառնում նրա նպատակը և խնդիրները: Դասարանը բաժանվում է երկու ենթախմբերի, կատարվում է պլանի մշակում:

3) Պլանի համար հիմք պետք է ծառայեն հայոց լեզվի քերականությունից աշակերտների գիտելիքները և հանրահաշվի լեզվի կառուցման և նրա կիրառության վերաբերյալ դասագրքային նյութերը:
4) Այս փուլում ուսուցիչը ցույց է տալիս օգնություն անհրաժեշտ նյութերը հավաքելիս, պլանը վերջնական տեսքի բերելիս, մշակում է մասնակիցների գործունեության գնահատման հայտանիշներ:

2. Որոնողական փուլ:

5) Աշակերտները հավաքում են անհրաժեշտ նյութեր՝ ակտիվորեն օգտագործելով համացանցը: Համացանցային որոնումները հարկ է իրականացնել հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Առաջադրվող հարցեր կարող են լինել՝ հանրահաշիվը բնության ուսումնասիրության լեզու; մաթեմատիկայի լեզուն. բնական լեզուները և մաթեմատիկայի լեզուն և այլն: Աշակերտները կատարում են լեզվի և մաթեմատիկայի ուսուցիչների կամ այլ /անգամ համալսարանական/ մասնագետների ձայնագրություններ թենայի վերաբերյալ, ենթախմբերում պարբերաբար կազմակերպում են քննարկումներ, պատրաստվում են երկու պաստառներ ընդհանրությունների և տարբերությունների վերաբերյալ:
6) Այս փուլում ուսուցիչը տալիս է պարբերական խորհրդատվություն, աջակցություն նյութերի կազմակերպման և մշակման հարցում, հետևում է յուրաքանչյուր մասնակցի գործունեությանը և գնահատում է աշակերտների աշխատանքը:

3. Եզրափակիչ փուլ:

7) Նախագծի ձևավորում, նախապտրսստում պաշտպանության:
8) Ուսուցիչը օգնում է ներկայացումների ձևավորմանը, ելույթների նախապատրաստմանը, կազմակերպում է նախագծի ներկայացում-պաշտպանությունը:

4. Ինանագնահատման փուլ: Աշակերտները գրում են շարադրություն «Ի՞նչ տվեց ինձ նախագծի վրա աշխատանքը» թեմայով: Ուսուցիչը գնահատում է աշակերտների աշխատանքը: